ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ
քննող անձի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/82

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձը) քննելով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 20.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 20.06.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի կարիքների համար կազմակերպվել է ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1.1 կետով գնման առարկա է հանդիսանում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել «Եվրոպա» ՍՊԸ-ն և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում հայտով ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.06.2018թ. տրված թիվ 339-48 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, իսկ «Եվրոպա» ՍՊԸ-ն՝ իր կողմից ներկայացված բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար նշել է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է մերժել «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ. «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի, մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Իսկ նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Եվրոպա» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար նշել է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ

փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Նույն կետով նախատեսվել է նաև, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

Դրա հետ մեկտեղ, Ընթացակարգի հրավերի 10.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը

հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.06.2018թ. տրված թիվ 339-48 երաշխիքը, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, իսկ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երաշխիքում նշվել է՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածը սահմանում է, որ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Այսպիսով՝ բենեֆիցիար ասելով հասկանում ենք պարտատեր, որը տվյալ դեպքում հանդես է գալիս Գեղարքունիքի մարզպետարանը, քանի որ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն համապատասխան պարտավորություններ է ստանձնել Գեղարքունիքի մարզպետարանի, որպես պատվիրատու կողմից իր կարիքների համար հայտարարված ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթ շրջանակներում:

Միևնույն ժամանակ թե՛ Կարգը, և թե՛ Ընթացակարգի հրավերը սահմանում են այն դեպքերը, երբ երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար նշվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Դա այն է, երբ պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը պատվիրատուին ներկայացնում է նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Մնացած այլ դեպքերում ո՛չ Կարգը և ո՛չ Ընթացակարգի հրավերը չեն նախատեսում, որ հայտի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելիս՝ բենեֆիցիար պետք է նշվի ՀՀ ֆինանսների նախարարությունը: Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի ապահովման վճարման պահանջագրի և դրա պարտադիր պայմանների և լրացման ուղեցույցի համաձայն՝ որպես շահառու ի սկզբանե լրացված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ պարտատերը տվյալ դեպքում հանդիսանում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, և նույն

տրամաբանությամբ հայտի ապահովման բանկային երաշխիքի մեջ նույնպես որպես բենեֆիցիար պետք է նշվի պատվիրատուի անվանումը:

ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 423-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել էր Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայտի ապահովումը ներկայացվում է օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար, իսկ պայմանագրի ապահովումը՝ օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևը կիրառելի էր, թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս: Իսկ ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1145-Ն որոշմամբ օրինակելի ձևի մեջ ի սկզբանե որպես բենեֆիցիար ՀՀ ֆինանսների նախարարությունը նշված չէ եղել:

Այսպիսով՝ անհիմն է գնահատող հանձնաժողովի այն պնդումը (ամրագրված արձանագրությամբ) առ այն, որ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ հայտի ապահովումում որպես բենեֆիցիար պետք է նշվեր՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, քանզի նշված պահանջը Ընթացակարգի հրավերով սահմանվել է պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթերի մասով, սակայն ոչ հայտի ապահովման մասով:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ պայմանագրի ապահովումը (առավել ևս պայմանագրի կանխավճարի ապահովումը) և հայտի ապահովումը տարբեր իրավական կատեգորիաներ են: Իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի

նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Այսպիսով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, հետևաբար նշված դրույթը չի կարող կիրառվել բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացնելիս:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (բանկային երաշխիքի մասով) ենթակա է մերժման, իսկ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերի պահանջներին բավարար գնահատման, քանի որ թե՛ Կարգով և թե՛ Ընթացակարգի հրավերով համապատասխան պահանջի բացակայության պայմաններում՝ որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար պետք նշվեր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նույն փաստական հանգամանքներում բողոքում նշված իրավական դիրքորոշումն է արտահայտվել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանի կողմից՝ 13.06.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/66 որոշմամբ և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի կողմից՝ 08.06.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/71 որոշմամբ, որոնցով արձանագրվել է, որ որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ որպես բենեֆիցիար պետք նշվեր ընթացակարգի պատվիրատուն, այլ ոչ թե ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Ուսումնասիրելով վերոշարադրված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով, իսկ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով հայտը մերժելով՝ գործել է ոչ

իրավաչափ, որի արդյունքում խախտվել են սույն բողոքով նշված գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան դրույթները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետ և այլն)»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է.

1. Պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացրած որոշումը՝ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջների համապատասխան գնահատելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով «Եվրոպա» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել որոշում «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայարած հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի լիզորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 20.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 25.06.2018թ. թիվ 29973-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված ՀՀ ԳՄ ԲԸԱՇՁԲ-18-02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է բավարար և ընկերությունը ճանաչվել է առաջին

տեղ զբաղեցրած մասնակից: «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխան հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում որպես բենեֆիցիար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2018 թվականի փետրվարի 6-ին՝ նույն օբյեկտի շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է բոլոր այն հայտերը, որոնցով ներկայացված հայտերի ապահովման բանկային երաշխիքներում որպես բենեֆիցիար նշված է եղել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը:

Հանձնաժողովի որոշման դեմ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից բերված ԳԲԽ-ԱՄ-2018/47 բողոքը՝ բողոքարկման խորհրդի 17.04.2018թ. որոշմամբ չի բավարարվել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գնահատող հանձնաժողովի գործողությունները համարվել են իրավաչափ:

ՀՀ Գեղարքունիքի մազպետարանի ՀՀ ԳՄ ԲԸԱՇՁԲ-18-02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը հայտերի գնահատումը իրականացրել է հիմք ընդունելով մրցույթի հրավերի, ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի N 1145-Ն որոշման պահանջները և բողոքարկման խորհրդի 17.04.2018թ. ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ժորա Խաչատրյանը:

3. «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Եվրոպա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված միջնորդությամբ Բողոքի քննությանը ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Եվրոպա» ՍՊԸ-ն 29.06.2018թ. թիվ Պ-29/06 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հունիսի 20-ին ներկայացվել է բողոք՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ:

Բողոք ներկայացրած անձը պահանջել է՝ «1. պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը՝ Եվրոպա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջների համապատասխան գնահատելու վերաբերյալ, 2. պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով Եվրոպա ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը, 3. պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել որոշում Եվրոպա ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին, 4. պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը»:

Ներկայացված բողոքի դեմ առարկում ենք հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածով սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները: Այսպես, օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված է «հայտի ապահովում» հասկացությունը, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում՝ «պայմանագրի ապահովում» հասկացությունը, համաձայն որի.

- «հայտի ապահովում»՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց,

- «պայմանագրի ապահովում»՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:

Վերոգրյալից հետևում է, որ և՛ հայտի ապահովումը, և՛ պայմանագրի ապահովումը մասնակցի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց են:

Վերոնշյալ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված է պայմանագրի ապահովման հոդվածի մասերը և նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Հոդվածի բովանդակությունից հանգում ենք այն հետևությանը, որ կանխավճարի ապահովումը նույնպես մասնակցի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է, քանի որ համաձայն «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168- Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ կարգ) 32-րդ կետի 15-րդ ենթակետով սահմանված է, որ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Հաշվի առնելով, որ կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետում նշված է, որ կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար հանդես է գալիս ՀՀ ֆինանսների նախարարությունը, հետևաբար նշված նորմատիվ իրավական ակտերի բովանդակությունից և էությունից ելնելով ակնհայտ է, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնելիս բենեֆիցիար պետք է նշի ՀՀ ֆինանսների նախարարություն, որն էլ նշվել է՝ որպես մասնակից, հայտի ապահովման փաստաթղթում:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածը սահմանում է երաշխիքի հասկացությունը, համաձայն որի երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Վերոգրյալից պարզ է, որ հայտի ապահովումը, պայմանագրի ապահովումը և կանխավճարի ապահովումը մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների

կատարումն ապահովող միջոց է պարտատիրոջ (բենեֆիցիարի)՝ ՀՀ ֆինանսների նախախարության հանդեպ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետը սահմանում է նշված օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, այն է՝ լիազորված մարմինը՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող գործադիր իշխանության պետական մարմինը՝ տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Բացի վերոնշյալից գնումներին վերաբերող իրավահարաբերությունները կարգավորվում են նաև լոկալ իրավական ակտերով:

Նշյալներից է հանդիսանում նաև ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 30.04.2015թ. թիվ 1/73-1/10671-15 գրություն-ցուցումը, որը սահմանում է հայտի ապահովման և պայմանագրի ապահովման հետ կապված վճարումները:

Իսկ Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում, ըստ որի ակնհայտ է, որ նշված իրավահարաբերություններում պահանջատեր, ուստի և բենեֆիցիար հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Եվրոպա» ՍՊԸ-ի տնօրեն Համլետ Պապոյանը և լիազորված ներկայացուցիչներ Վահե Սաղաթելյանը և Հայկ Ղազարյանը:

4. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 20.06.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, Պատվիրատուի 25.06.2018թ. թիվ 29973-18 գրությամբ հայտնած դիրքորոշումը, Բողոքի քննությանը որպես երրորդ կողմ

ներգրավված «Եվրոպա» ՍՊԸ-ի 29.06.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ ներկայացված առարկությունները, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 17.04.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշումը.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտեր են ներկայացրել «Եվրոպա» ՍՊԸ-ն և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն:

Նշված Ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.06.2018թ. տրված թիվ 339-48 երաշխիքը, որը, նույն երաշխիքի 1-ին կետի համաձայն՝ հանդիսանում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (բենեֆիցիար) և «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի (պրինցիպալ) միջև կայանալիք մրցույթի Պրինցիպալի ապահովումից բխող պարտավորությունների կատարման ապահովում:

Հանձնաժողովը 15.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է, որ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չի համապատասխանում:

Նույն արձանագությամբ որոշել է մերժել «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքի մեջ, որպես բենեֆիցիար նշված է եղել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում, որպես բենցեֆիցիար պետք է նշվեր ՀՀ ֆինանսների նախարարություն:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ, «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց բողոքն ամբողջությամբ:

Որպես երրորդ կողմ ներգրավված «Եվրոպա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նույնպես պնդեց Բողոքի վերաբերյալ ներկայացրած առարկությունները: Վերջինս Բողոքներ քննող անձին հայտնեց նաև, որ քանի որ Հրավերում նշված չէր, որ հայտի ապահովման բանկային երաշխիքում, որպես բենեֆիցիար պետք է նշվեր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, Ընկերությունը հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ պարզաբանում ստանալու նպատակով զանգահարել է ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի հայտարարության տեքստում նշված հեռախոսահամարով և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից

ստացվել է պատասխան առ այն, որ հայտի ապահովման բանկային երաշխիքում, որպես բենեֆիցիար պետք է նշվի ՀՀ ֆինանսների նախարարություն:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք գնման հայտով նախատեսվել է կանխավճար, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ տեղյակ չէ և չի կարող պատասխանել այդ հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 383-րդ հոդվածի համաձայն՝ երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝ 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

- 10 կետի համաձայն՝ պայմանագրի ապահովումը՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե

մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

- 32-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար, ապա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը.

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

-7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում՝ 14.06.2018թ. թվագրված բանկային երաշխիքի ձևով, որի մեջ որպես բենեֆիցիար նշվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը:

- Հանձնաժողովը հայտերի գնահատման ընթացքում առաջնորդվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը հանդիսանում է վերջինիս կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց, ուստի որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքում շահառու (բենեֆիցիար) չէր կարող նշվել ՀՀ ֆինանսների նախարարությունը, քանի որ Կարգի 32-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնման գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար նշվում է ՀՀ ֆինանսների նախարարությունը միայն այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսվում է կանխավճար, որն էլ ներկայացվում է պայմանագրի ապահովում հանդիսացող կանխավճարի ապահովման բանկային երաշխիքի ձևով:

Բողոքներ քննող անձը միաժամանակ գտնում է նաև, որ Բողոքներ քննող անձ Մ. Անանյանի կողմից կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/47 որոշմամբ արձանագրված փաստական հանգամանքները որևէ կերպ սույն բողոքին վերաբերելի չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից 20.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/02 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացրած որոշումը՝ «Եվրոպա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջների համապատասխան գնահատելու վերաբերյալ դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով «Եվրոպա» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

4.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «Եվրոպա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին համապատասխան որոշում:

5.Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 15.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «ԱՐՍԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայարած հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**